

**ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ ԿԱՐՃ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Էռնեստ Հեմինգուեյ, ամերիկյան գրականություն, կարճ պատմվածք, խորհրդանիշ, ռեալիզմ, «այսբերգի տեսություն», կյանքի ու մահվան խորհուրդ, հոգևոր ճամփորդություն, Նիք Ադամս:

Ключевые слова и выражения: Эрнест Хемингуэй, американская литература, короткий рассказ, символ, реализм, «теория айсберга», тайна жизни и смерти, духовное путешествие, Ник Адамс.

Key words and expressions: Ernest Hemingway, American literature, short story, symbol, realism, “iceberg theory”, the concept of life and death, spiritual journey, Nick Adams.

Համաշխարհային գրականության ժառանգության տեսանկյունից Ամերիկայի Միացյալ Նահանգները թեև ունի համեմատաբար կարճ պատմություն, բայց թողել է մնայուն անուններ, որոնք ոչ միայն իրենց ուրույն տեղն են զբաղեցրել բազում ականավոր գրողների շարքում, այլև այժմ էլ շարունակում են գրավել ընթերցողին իրենց ինքնատիպ մտածողությամբ ու արտահայտման խորությամբ: Գաղտնիք չէ, որ 19-րդ դարում ամբողջ Եվրոպան խորասուզված ընթերցում էր ամերիկացի գրող Էդգար Պոյի մոայլ դեղեկտիվ պատմվածքներն ու ըմբռնում մեկ այլ ամերիկացու՝ Հենրի Լոնգֆելդի պատմական պոեմները: Սակայն դրանք սոսկ առաջին քայլերն էին, որոնք, անտարակույս, բացեցին 20-րդ դարի ամերիկյան գրականության ծաղկուն արահետն ու աշխարհին հանձնեցին բազմաթիվ նշանավոր անուններ: Քանի որ գրականությունը կյանքի հայելին է, ուստի այդ բուռն զարգացումը, հարկավ, պայմանավորված էր Մեծ ճգնաժամով, Երկու աշխարհամարտերի ժայթքումով ու, իհարկե, ռասայական խտրականության դեմ մղվող պայքարով, որոնք ցնցեցին Միացյալ Նահանգները և նպաստեցին մի շարք գրողների երևան գալուն, գրողներ, որոնք դարձան համաշխարհային գրականության դասականներ, արժանացան Նոբելյան մրցանակի և իրենց գրական ստեղծագործություններով մարմնավորեցին մի ամբողջ դարաշրջան:

1920-30-ականներին Միացյալ Նահանգներում տեղի ունեցան տնտեսական և սոցիալական արմատական փոփոխություններ, որոնք

ստեղծեցին նպաստավոր պայմաններ ռեալիզմի առաջացման համար, որն աննախադեպ հնարավորություն էր ընձեռում արտացոլելու ամերիկյան նոր արժեքները: Այդժամ ընթերցողներին սոսկ զվարճացնող ու տաղտկալի առօրյան մոռացության մատնելու համար հրատարակված գրականության կողքին հայտնվեցին երկեր, որոնք ընդգծում էին ստեղծված սոցիալական դրության փոփոխման խիստ անհրաժեշտությունը: Ռեալիստ գրողների երկերն աչքի էին ընկնում սոցիալական բախման պատկերմամբ և ամերիկյան կենսակերպի սուր քննադատությամբ (Թեոդոր Դրայզեր, Էռնեստ Հեմինգուեյ, Շերվուդ Անդերսոն և այլն):

20-րդ դարի ամերիկյան գրականությունն առանձնապես ուշագրավ է նաև «կորուսյալ սերնդի» առկայությամբ. ի դեպ, այս արտահայտությունը գրականության ոլորտ է ներթափանցել ամերիկացի հայտնի գրող, լրագրող, Նոբելյան մրցանակակիր Էռնեստ Միլլեր Հեմինգուեյի (1899-1961) շնորհիվ, որն իր հերթին այն փոխառել է ամերիկուհի գրող և գրականության տեսաբան Գերտրուդա Սթայնից: Այդ՝ այսօր արդեն հանրահայտ դարձած արտահայտությունը պատկերում է հետպատերազմյան ժամանակաշրջանի գրողների մի ամբողջ աստղաբույլ (Ուիլյամ Ֆոլքներ, Ջոն Դոս Պասսոս, Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդ, Էռնեստ Հեմինգուեյ, Նորման Մեյլեր և այլն), որոնք իրենց ստեղծագործություններում խորությամբ պատկերել են իդեալների դառը կորուստը, անբացատրելի հիասթափությունը քաղաքակրթությունից և մարդու խորթացումը հասարակությունից: Սակայն վերոհիշյալ գրողների շարքում, անշուշտ, առանձնանում է Էռնեստ Հեմինգուեյը, որն աչքի է ընկնում ոչ միայն իր երկերի ուրույն թեմաներով ու բազմազանությամբ, այլ նաև յուրահատուկ գրելաոճով: Պատահական չէ, որ հենց նրա գրչին է պատկանում «այսբերգի տեսություն» յուրահատուկ ժանրային մոտեցումը, ըստ որի, հեղինակի համոզմամբ, գրվածքի բուն նյութը պետք է թաղված լինի ենթատեքստում. այդպիսին է այսբերգը տեսանելի հատվածն ավելի քիչ է, քան խորության մեջ գտնվողը: Սակայն սա, ինչ խոսք, ենթադրում է նաև ենթատեքստային ակնարկներ, որոնք առավել ուշագրավ են: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ վարպետ գրողն այս ծածկագրված գաղափարական ուղերձներն ընթերցողներին է հասցնում խորհրդանշների հմուտ կիրառմամբ:

Ամերիկացի հանրահայտ գրող և լրագրող Էռնեստ Հեմինգուեյը, անտարակույս, 20-րդ դարի ամենաազդեցիկ հեղինակներից է, որի ստեղծագործությունն աչքի է ընկնում բացառիկ զգացմունքայնությամբ ու դրամատիզմով: Ապագա գրողն իր կյանքի առաջին տարիներն անց է կացրել Չիկագոյի՝ պահպանողական ավանդներ ունեցող արվարձաններից մեկում, բայց այդ հեղձուկ միջավայրին հաճախ փոխարինել է Միչիգանի հյուսիսում ալիքվող կյանքը, ուր նա շուտով սովորում է գնահատել ա-

գատությունը: Ավագ դպրոցում ուսանելու տարիներին Հեմինգուեյը սկսում է աշխատակցել «Trapeze and Tabula» անունը կրող լրագրին, որտեղ տպագրում է գլխավորապես սպորտին վերաբերող նյութեր: Ուսումնական տարեկանն ավարտելուց աչքի չկառնող լրագրողը սկսում է աշխատակցել «Kansas City Star» լրագրին: Լրագրողական այս փորձառությունը հետագայում մեծ ազդեցություն է ունենում գրողի երկերի ձևավորման վրա և պայմանավորում է դրանց ինքնատիպ ոճը: Անդրադառնալով կյանքի այս տարիներին՝ գրողը նշում է. «Star-ում աշխատելու տարիներին դու ստիպված էիր սովորել գրել պարզ պատմողական նախադասություն: Սա բոլորին է օգտակար: Լրագրողական աշխատանքը չի վնասի երիտասարդ գրողին, այլ կօգնի նրան, եթե նա ժամանակին թողնի այդ աշխատանքը»¹: 1918-ին Հեմինգուեյը մասնակցում է Առաջին համաշխարհային պատերազմին՝ միանալով իտալական բանակին՝ որպես շտապ օգնության մեքենայի վարորդ: Հետագայում նա այս տարիներին ունեցած տպավորություններն ու հույզերը վերարտադրում է «Հրաժեշտ գեներալ» խորագրով վեպում, որը լույս է ընծայում 1929-ին: 1930-ականները գրողի կյանքի արկածախնդրության ժամանակաշրջանն են. որսորդություն Աֆրիկայի անծայրածիր սավանններում, ցլամարտ Իսպանիայում, ձկնորսություն Ֆլորիդայում... Սակայն այս ամենով հանդերձ՝ նրա տեսադաշտից բնավ դուրս չի մնում 1937-ին Իսպանիայում բռնկված քաղաքացիական պատերազմը, որի անմիջական արձագանքն է դառնում 1940թ. տպագրված «Ո՛մ մահն է գուժում զանգը» հանրահայտ վեպը, որը հեղինակը ներկայացնում է Պուլիցերյան մրցանակի, սակայն այդ մրցանակը նրան հաջողվում է ստանալ միայն 1951թ. հրապարակված «Ծերունին և ծովը» փիլիսոփայական խորություն ունեցող պատմվածքի շնորհիվ: 1954-ին Հեմինգուեյն արժանանում է Նոբելյան մրցանակի, սակայն գրական գործունեության այս աննախադեպ գնահատականն ամենևին էլ չի ամրապնդում հեղինակի մարմնում և մտավոր աշխարհում բույն դրած ցավերը, որոնք Կուբայում ձեռք բերած բազում վնասվածքների արդյունք էին: Եվ չկարողանալով մարտնչել ու հաղթահարել այդ տվյալստեղծությունները՝ 1961-ին հանձարն ինքնասպան է լինում:

Ինչպես արդեն նշել ենք, Հեմինգուեյի կերտած ստեղծագործությունները լի են խորհրդանշաններով, որոնք այդ երկերին հաղորդում են յուրօրինակություն ու խորք:

¹ Werlock, Abby H.P., ed. "Hemingway, Ernest". The Facts on File Companion to the American Novel: New York: Facts on File, Inc. , 2006. Bloom's Literary references Online

Առանց խորհրդանիշների չի կարող լինել լեզու, առավել ևս գրականություն, քանի որ բառերն անգամ խորհրդանիշներ են, որոնք կերտվում են կամայական տառերից ու ձայնային պարզագույն հնչյուններին կյանք հաղորդում: Ամեննին համարձակ չի լինի պնդել, որ խորհրդանիշները գոյություն են ունեցել դեռևս վաղնջական ժամանակներում, գուցե անգամ մինչև Աստծո կողմից աշխարհի արարումը: Իսկ գրականության ոլորտում դրանք արտահայտչամիջոցներ են, որոնք օգտագործվում են՝ համոզիչ դարձնելու գիտակցությամբ ընկալվող անտեսանելի իրականը:

«Խորհրդանիշ» բառն ունի հունական ծագում և մասնատելու դեպքում նշանա-կում է «նետել» և «միասին»: Հետևաբար այս ծագումնաբանությունն ակներև է դարձնում բառերի ու գաղափարների հարկադրված հաղորդակցումը և ֆիզիկական գոյությունը՝ անկախ բնական համանմանություններից: Համայն աշխարհում մարդիկ ընդունել են որոշակի խորհրդանիշներ, որոնց առկայությունը պայմանավորում է ցանկացած տեղեկության արձանագրումն ու փոխանցումը: Այդ նույն խորհրդանիշներն ամենուրեք են՝ կրոնում, գիտության տարբեր ոլորտներում, կենցաղի ենթաշերտերում: Ցանկացած երկիր ունի իրեն բնորոշ պետական և ոչ պետական խորհրդանիշը, որը հաստատում է վերջինիս ազգային ինքնությունը, տալիս անկախության երանելի զգացում և իր նմանների հետ միավորելով հանդերձ՝ երաշխավորում եզակիության հանգամանքը: Այդպիսին է, օրինակ, դրոշի խորհրդանիշը, որը, անշուշտ, նախանշում է պետականության հաստատումը: Խորհրդանշային իմաստ ունեն նաև որոշակի ծիսակատարություններ, օրինակ, թագադրումը, ռազմական երթերն ու կրոնական արարողությունները: Փիլիսոփայության տեսանկյունից «խորհրդանիշ» հասկացությունը բացառապես կիրառվում է մշակութային արժեք ունեցող իրերին անդրադառնալիս և ունի բացարձակապես ներկայացուցչական բնույթ: Սա կարող է ներառել թալիսմանների գործածումը, բառերի կիրառումը և բազում այլ գործոններ, քանի որ ամեն ոք որևէ բան ասելիս կամ անելիս անխուսափելիորեն առնչվում է մշակութային խորհրդանիշների հետ: Ուստի խորհրդանիշը վերացական հասկացությունների ու գաղափարների մարմնացումն է: Դրա օրինակ կարող են ծառայել առարկաները, կերպարանքները, հնչյուններն ու գույները, ինչպես նաև դիմախաղերն ու բառային մեկնումները: Նույն խորհրդանիշը կարող է տարբեր մարդկանց կողմից ընկալվել միանգամայն այլ դրսևորումներով, քանի որ խորհրդանիշների մի մասը ձեռք է բերվում փորձառության շնորհիվ, իսկ մյուս մասը՝ մշակույթի: Մշակութային ամենատարածված խորհրդանիշը լեզուն է. այբուբենի տառերի համակցումը խորհրդանշում է յուրատեսակ խոսակցական լեզուն:

Կրոնական առումով խորհրդանիշը կիրառվում է՝ ներկայացնելու համար հավատի տարատեսակ դրսևորումները. օրինակ՝ քրիստոնեության մեջ խաչը խորհրդանշում է Հիսուսի մահը, իսկ Դավթի աստղը՝ հրեական ուսմունքը:

Մշակութային տեսանկյունից միևնույն խորհրդանիշը տարբեր ազգերի կողմից ընկալվում է որպես բացարձակապես եզակի կարևորություն ունեցող երևույթ, քանի որ պայմանավորված է տվյալ հասարակության ավանդական պատկերացումներով: Օրինակ՝ շատ երկրներում կարմիր գույնն ընկալվում է որպես պատերազմի և արյան խորհրդանիշ, իսկ Չինաստանում այն մարմնավորում է ամուսնության, ընտանիքի ստեղծման հասկացությունը: Նմանապես ճապոնական շինթո կոչվող կրոնի համաձայն՝ այդ նույն գույնը խորհրդանշում է կյանքը, իսկ Ֆրանսիայում՝ իրավական դպրոցը: Խորհրդանիշային իմաստ կարող են արտահայտել նաև կենդանիները. օրինակ՝ ասիական երկրներում փղերը կարևոր դեր են կատարում կրոնական ավանդույթներում և առասպելաբանության մեջ, անգամ աստվածացվում են, քանի որ, ըստ այս ժողովուրդների պատկերացման, մարմնավորում են ուժն ու իմաստությունը: Մինչդեռ Հեմինգուեյի «Բլուրներն ինչպես սպիտակ փղեր» խորագրով պատմվածքում սպիտակ փղի այլաբանական կերպարը խորհրդանշում է անցանկալին²: Սակայն խորհրդանիշները, անտարակույս, ունեն սոսկ այն իմաստը, ինչը մարդիկ են դրանց վերագրում: Եթե որևէ հասարակություն որոշակի ժամանակահատվածի ընթացքում դադարի նկատել կամ առավել ևս հատկանիշներ վերագրել խորհրդանիշներին, ապա կարճ ժամանակ անց դրանք ինքնըստինքյան կդադարեն գոյություն ունենալուց:

Ինչ վերաբերում է խորհրդանիշների կիրառմանը Հեմինգուեյի կարճ պատմվածքներում, ապա դրանք առանձնակի կարևորություն են ստանում, քանի որ վերցված են բնությունից: Նրա կերտած կերպարներն անընդհատ բնակվում են կա՛մ հովիտներում, կա՛մ ապաստան են գտնում խորհրդանշային նշանակություն ունեցող լեռներում: Այս ինքնատիպ գրողի վաղ շրջանի ստեղծագործություններում տիրապետող խորհրդանիշը ֆիզիկական և հոգևոր վերքերն են: Եղանակային փոփոխությունները, մասնավորապես անձրևն ու ձյունը, աշնան և ձմռան հերթազայությունը հայտնվում են այս երկերում այն պահին, երբ անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել մարդկային ճակատագրերի միջև, իսկ լույսն ու մութը

² Տե՛ս **Johnston, Kenneth G.** (Autumn 1982). "Hills Like White Elephants". *Studies in American Fiction* 10 (2): 230-238

խորհրդանշում են կյանքն ու մահը կամ մարդկային բնույթի առողջ և անառողջ բնորոշիչ գծերը: Հանրության կողմից վաղուց ընդունված այնպիսի խորհրդանիշ, ինչպիսին է լեռ մագլցելը, վերոհիշյալ երկերում ընկալվում է որպես հոգևոր մաքրագործում, իսկ ջուրը հատելը՝ հոգևոր փոխակերպում, արևածագը մարմնավորում է կյանքը, իսկ մայրամուտը՝ մահը և այլն: Հեմինգուեյի վարպետ մտահղացման շնորհիվ կյանքից, կրոնական ավանդույթներից կամ բնությունից վերցված խորհրդանիշները վերածվում են ինչ-որ անտեսանելի երևույթի տեսանելի նշանի: Դրանք պատկերում են սոսկ սառցաբեկորի մակերևութին՝ հայտնված մասն ու ակնարկում են մարդկային խոր փորձառությունը, որն ամենևին շոշափելի չէ, բայց բացարձակապես էական է:

Հեմինգուեյի նախասիրած խորհրդանիշներից է ճամփորդությունը, որը հոգևոր առումով փոփոխությունների, նոր հայտնագործությունների և շարժման անգուսպ փափագ է: Խորհրդանշական ճամփորդությունը սկիզբ է առնում խավարում ու տանում է դեպի լույսի որոնում. այս ճանապարհը մարմնավորում է երկու գաղափար՝ արտաքին շարժում, որն արտահայտվում է ստեղծագործության բովանդակության մեջ, և ներքին շարժում, որն ապահովում է խորհրդանշականն ու հոգևորը: Ուշագրավ է, որ Հեմինգուեյի կերտած գրական հերոսները ձեռնարկում են հոգևոր ճամփորդություն, որը նրանց տարրալուծում է բնության մեջ, իսկ ռեալիզմի և խորհրդանիշների միախառնման միջոցով հեղինակը ստեղծում է ճշմարիտ աշխարհի պատկերն ու բացահայտում կյանքի և մահվան խորհուրդը:

Հեմինգուեյի կարճ պատմվածքների վերլուծմանն անդրադառնալիս նշելի է ամերիկացի գրող և կենսագիր Կառլոս Բեյքերի տեսակետը, որը մասնավորապես ասում է. «Երբ ընթերցողը գիտակցում է այն, ինչն ընկած է Հեմինգուեյի գրվածքների խորքում, նա ամենուրեք գտնում է գեղեցիկ, բյուրեղացված, սեղմ և հուզիչ խորհրդանիշներ, որոնք բավական կշիռ ունեն»³:

Է. Հեմինգուեյի պատմվածքներում կենտրոնական խորհրդանիշը կենդանիներն են, որոնք մարմնավորում են գրական հերոսների հոգեբանական վիճակն ու զգացմունքային ցանկությունները: Գրողի հեղինակած տասնչորս պատմվածքներում գրական հերոսը Նիք Ադամսն է, որը, ի տարբերություն 20-րդ դարի մարդ արարածի, գերադասում է առանձնանալ հասարակությունից և հաղորդակցվել բնության հետ: Այս

³ **Baker, C.** “Ernest Hemingway: A Life Story”, 1969, New York: Charles Scribner’s Sons, p 117

կերպարի միջոցով գրողն ընթերցողին է հասցնում իր յուրօրինակ ուղերձը . մարդկության փրկությունը բնության հետ հաղորդակցման մեջ է: Ասվածն առավել ցայտուն դարձնելու նպատակով փորձենք անդրադառնալ գրողի բազում պատմվածքներից մի քանիսի կերպարների խորհրդանշանային վերլուծությանը:

Այսպես, «Կատուն անձրևի տակ» պատմվածքը, որ լի է բազմաթիվ առինքնող խորհրդանիշներով, հյուրանոցում բնակվող ամերիկացի գույգի մասին է: Այստեղ գլխավոր խորհրդանիշը կատուն է, որը հասկանալի է դառնում հենց խորագրից, իսկ նա անձրևի տակ է, որովհետև մարմնավորում է ամերիկուհու՝ զգացմունքներից խեղդված ներաշխարհը: Ուշագրավ է, որ կատվի կերպարի առաջին իսկ պատկերման պահին հեղինակը կիրառում է անգլերենում իգական սեռը բնորոշող դերանունը, թեև կինը չէր կարող նման հեռավորությունից որոշել սեղանի տակ սպաստան գտած կենդանու սեռը: Այս փոքրիկ, բայց յուրատեսակ հնարքով Հեմինգուեյն ընթերցողին նախապատրաստում է կենդանու և կնոջ հոգևոր մտերմիկ կապին, իսկ վատ եղանակը, անշուշտ, խորհրդանշում է այս ամուսնական գույգի կյանքի ճգնաժամային վիճակը. *«Անձրևում էր: Անձրևը կաթկթում էր արմավենիների ճյուղերից: Ջուրը կուտակվում էր մանրախճով ծածկված արահետների փոսերում: Ծովը անձրևի տակ բարձր ալիքով հարվածում էր և սրբում տանում էր ափը, որպեսզի կրկին հարվածի անձրևի տակ: Մեքենաները հեռացան, և հրապարակը՝ պատերազմի հուշարձանով հանդերձ, մնաց դատարկ: Հրապարակի դիմաց՝ արձարանի մուտքի մոտ, մատուցողը կանգնած նայում էր դատարկ հրապարակին»*:

Ակնհայտ է, որ անձրևը խորհրդանշում է ամերիկացի ամուլի մեկուսացումը ոչ միայն հասարակությունից, այլ նաև միմյանցից, իսկ նույն անձրևի տակ խեղդվող կատուն խորհրդանշում է կնոջ միայնակությունը, որին ամուսինը թողել էր մենակ սեփական հույզերի աշխարհում, որոնք խեղդում էին նրան: Խորհրդանշական է նաև կնոջ՝ կատվին փաղաքշելու ցանկությունը, որը սեփական չիրականացված սիրո պահանջն է, և այն իրականանում է ոչ թե ամուսնու, այլ հյուրանոցատիրոջ օգնությամբ, որը կատվին կնոջն է հանձնում:

Մեկ այլ ուշագրավ պատմվածք է արդեն հիշատակված «Բլուրներն ինչպես սպիտակ փղեր»-ը, ուր գործողությունները ծավալվում են ամերիկացի երիտասարդի և իսպանացի աղջկա երկխոսության միջոցով, որը տեղի է ունենում կայարանում: Մադրիդ մեկնող գնացքին սպասելիս: Պատմվածքի առաջին իսկ էջերից ընթերցողի աչքի առջև բացվում է ամայի բնատեսարանի պատկերը, որը հեղինակը նկարագրում է՝ որպես «գորշ ու չոր» տարածություն, ուր չկան «ստվեր ու ծառեր»: Թվում է՝ գործողությունը ծավալվում է անապատում, քանի որ ոչ միայն շրջապատող տեսարանն է

անկյանք, այլև զգալի են երիտասարդի և իսպանուհու միայնությունն ու օտարվածությունը, և սոսկ էբրո գետի հիշատակումն է հավաստում աշխարհի հետ կապվածության փաստը: Պատումի կարևորագույն խորհրդանիշը, արդարև, սպիտակ փիղն է, որը պատմականորեն մարմնավորում է անօգուտ ընծայի գաղափարը, քանի որ նման նվերի օգտակարությունն ավելի քիչ է, քան այն պահելու ծախքերը: Ուստի ամերիկացին, որը օրիորդի ամուսինն է կամ սիրած տղան, աղջկա հղիությունն ընկալում է իբրև սպիտակ փիղ, որը հասկանալի է դառնում վերջինիս՝ իսպանուհուն ուղղված համոզող խոսքերից. տղան փորձում է աղջկան բացատրել երեխային լույս աշխարհ բերելու վճռի աննպատակ ու անտեղի լինելը: Մյուս խորհրդանիշը, իհարկե, երկաթուղային կայարանն է, որ մարմնավորում է կարևոր որոշում կայացնելու անհրաժեշտությունը. այն կատարում է ճիշտ նույն դերը, ինչը տեսանելի է Հեմինգուեյի այլ պատմվածքներում կերտած խաչմերուկների խորհրդանիշի մեջ: Այս կայարանի մեկուսացվածությունը խորհրդանշում է նաև իսպանուհու ներքին միայնությունը. նա ստիպված է միայնակ որոշում կայացնել սեփական երեխայի ճակատագրի ու իր հետագա կյանքի մասին: Բավական ուշագրավ խորհրդանիշ է նաև խորտկարանի դռան վրա կախված բամբուկե վարագույրը, որը կարծես մարմնավորում է այս գույգին տանջող բոլոր խնդիրները՝ սահմանափակումներ, բաժանում և բազում այլ կնճռոտ հարցեր, որոնք նրանք ստիպված են դիմագրավել: Պատումի զարգացմանը գուզընթաց՝ վարագույրը կարծես վերածվում է այս երկուսին բաժանող պատի: Պակաս կարևոր խորհրդանիշ չէ, անշուշտ, նաև սեղանը, որի կողքին նստում են ամերիկացի երիտասարդն ու իսպանուհին: Սա կարծես մարմնավորում է այն հենարանը, որից զուրկ է աղջիկը. սեղանն ունի ոտքեր, որի վրա կարող է հենվել, իսկ իսպանուհին անկարող է հանձին իր սիրած տղամարդու որևէ աջակցություն գտնել. «*Էբրոյի դաշտավայրը եզերող բլուրները երկար էին ու սպիտակ: Այս մասում ո՛չ ծառեր կային և ո՛չ էլ ստվեր, ու կայարանն ընկած էր արևի տակ՝ երկու երկաթուղիների միջև: Կայարանի դիմաց շենքի հեղձուցիչ ստվերն էր: Խորտկարանի դռնից ճանձերից պաշտպանվելու համար բամբուկի փայտիկներից վարագույր էր կախված: Ամերիկացին մի աղջկա հետ նստեց դրսի ստվերում՝ սեղանի մոտ: Խիստ շոգ էր, իսկ ձեպընթացը Բարսելոնայից գալու էր քառասուն րոպե հետո: Այստեղ այն կանգնում էր երկու րոպե, ապա մեկնում Մադրիդ»*

:

Այսպիսով, Էոնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքների վերլուծությունը բացահայտում է գրողի յուրօրինակ գրական ոճը, որը նուրբ է, լի երկխոսություններով և շատ հաճախ ստիպում է ընթերցողի օգտագործել սեփական երևակայությունը հասու լինելու համար այն ներքին

խոհերին ու գաղափարներին, որոնք ծածկագրված են յուրաքանչյուր տողում: Կարճ պատմվածքներում գործող կերպարները սակավաթիվ են, իսկ գործողություններն էլ ունենում են կտրուկ ավարտ, ուստի բնավ դյուրին չէ հեղինակի համար այդ համառոտ պատումում ներկայացնել իրեն հուզող հարցերի ամբողջ շրջանակը: Եվ միայն Հեմինգուեյի խորհրդանիշների վարպետ կիրառումն է, որ հնարավորություն է ընձեռել նրան կատարելության հասցնելու կարճ պատմվածքների կերտման բարդ արվեստը:

Գ. Գրիգորյան

Խորհրդանիշները Էռնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքներում Ամփոփում

Հոդվածը նվիրված է ամերիկացի երևելի գրող Էռնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքներում կիրառված խորհրդանիշների քննությանը: Եզրակացված է, որ արձակագրի կերտած կերպարներն անընդհատ բնակվում են կա՛մ հովիտներում, կա՛մ ապաստան են գտնում խորհրդանշային նշանակություն ունեցող լեռներում: Հատկապես վաղ շրջանի ստեղծագործություններում տիրապետող խորհրդանիշները ֆիզիկական և հոգևոր վերքերն են: Եղանակային փոփոխությունները, մասնավորապես անձրևն ու ձյունը, աշնան և ձմռան հերթագայությունը հայտնվում են այս երկերում այն պահին, երբ անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել մարդկային ճակատագրերի միջև, իսկ լույսն ու մութը խորհրդանշում են կյանքն ու մահը կամ մարդկային բնույթի առողջ և անառողջ բնորոշիչ գծերը: Հեմինգուեյի վարպետ մտահղացման շնորհիվ կյանքից, կրոնական ավանդույթներից կամ բնությունից վերցված խորհրդանիշները վերածվում են ինչ-որ անտեսանելի երևույթի տեսանելի նշանի: Դրանք պատկերում են սոսկ սառցաբեկորի մակերևութին հայտնված մասն ու ակնարկում են մարդկային խոր փորձառությունը, որն ամեննին շոշափելի չէ, բայց բացարձակապես էական է:

Г. Григорян

Символы в коротких рассказах Эрнеста Хемингуэя

Резюме

Статья посвящена анализу сипмволов, использованных в коротких рассказах замечательного американского писателя Эрнеста Хемингуэя. Примечательно, что созданные прозаиком образы вечно обитают либо в долинах, либо находят пристанище в горах, имеющих символическое значение. В произведениях раннего периода творчества особенно преобладающими символами являются физические и душевные раны. Погод-

ные изменения, в частности, дождь и снег, смена осени зимой проявляются в этих произведениях в тот момент, когда необходимо провести параллель между человеческими судьбами, а свет и тьма символизируют жизнь и смерть, либо здоровые и нездоровые человеческие качества. Благодаря особому мастерству, символы, взятые из жизни, религиозных обычаев или природы, из невидимых явлений превращаются под пером писателя в видимые знаки. Они отображают сугубо поверхностную часть ледяной глыбы и намекают на человеческий опыт, который неосознан, но весьма существенен.

G. Grigoryan

Symbols in Ernest Hemingway's Short Stories

Summary

The article is dedicated to the analysis of symbols in the short stories by the famous American writer Ernest Hemingway. It concludes that the characters created by the prose writer constantly live either in the valleys or find shelter in mountains, which has symbolic meaning. Particularly in the works of the early period physical and spiritual wounds dominate. Weather changes, especially rain and snow, the succession of autumn and winter appear in those works at the moment when it is necessary to draw a parallel between the people's fate, and the light and darkness symbolize the life and the death or the healthy and unhealthy features of the human nature. Due to Hemingway's masterful creativity the symbols taken from religious traditions or nature turn into some visible sign of an invisible phenomena. They just depict the part of an iceberg that has come to surface and hint at deep human experience, which is not tangible but is absolutely essential.